ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. III

21-րդ դարի մարտահրավերներ և հնարավորություններ

DEVELOPMENT OF ECONOMY AND SOCIETY:
Challenges and Opportunities of 21st Century

РАЗВИТИЕ ЭКОНОМИКИ И ОБЩЕСТВА:
вызовы и возможности 21-ого века

ՀՊՏՀ 27-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎ

2017 թ., նոյեմբերի 22-24

Երևան 2018

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65
Տ 778

Հրատարակվում է
ՀՊՏՀ գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհրդի նախագահ՝

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր

Խմբագրական խորհուրդ՝

ԴԻԱՆԱ ԳԱԼՈՅԱՆ - *ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., դոցենտ*
ՍՈՒՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ - *ՀՊՏՀ բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ԱՇՈՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ - *ՀՊՏՀ հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկան, տ.գ.դ., պրոֆեսոր*
ԽՈՐԵՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ գիտության և ասպիրանտուրայի բաժնի պետ, տ.գ.թ., դոցենտ*
ԱՇՈՏ ՍԱԼՆԱԶԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ ֆինանսների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ - *ՀՊՏՀ տնտես. ինֆորմ. և տեղեկ. համակ. ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ կառավարման ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ ակադ., տ.գ.դ., պրոֆեսոր*
ԳԱԳԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ - *ՀՊՏՀ պրոռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր*

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. 21-րդ դարի մարտահրավերներ և
Տ 778 **հնարավորություններ**: ՀՊՏՀ 27-րդ գիտաժողովի նյութեր / ՀՊՏՀ: - Եր.: Տնտեսագետ, 2018, 780 էջ:

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65

ISBN 978-9939-61-177-8

© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2018 թ.

ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Գիտաժողովի հարգելի՝ մասնակիցներ,

շնորհավորում եմ բոլորիս Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 27-րդ գիտաժողովի բացման առթիվ և ցանկանում եմ շնորհակալություն հայտնել գիտաժողովի բոլոր մասնակիցներին, ովքեր հետաքրքրություն են ցուցաբերել տնտեսության և հասարակության զարգացմանն առնչվող հրատապ հարցերի նկատմամբ:

Մեր համալսարանի տարեկան գիտաժողովները գեղեցիկ ավանդույթ են դարձել, բայց ես ուրախությամբ եմ նշում, որ դրանց կողքին այսօր առկա են մեր համալսարանի գիտական գործունեությունն արտացոլող այլ ձևաչափեր նույնպես: Հպարտությամբ եմ նշում, որ հետազոտական համալսարան դառնալու և մեր պետության տնտեսական կյանքին մասնագիտական մասնակցություն ունենալու իմ տեսլականը կամաց-կամաց կյանքի է կոչվում: Համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնի գործունեությունն այսօր տալիս է նշանակալի արդյունքներ. այստեղ ոչ միայն իրականացվում են հանրապետության տնտեսական արդիական հիմնախնդիրների վերաբերյալ հետազոտություններ, այլև կենտրոնի աշխատակիցները բուհի դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ, որպես փորձագետներ, հանդես են գալիս համապետական քննարկումներում:

Մինչ տարեկան գիտաժողովի կազմակերպումը գիտական սեմինարների ձևաչափերով հանդես եկան մեր ամբիոնները՝ շնորհանդեսներով ներկայացնելով իրենց ուսումնասիրության առանցքում առկա թեմաները: Այս ուսումնական տարվանից տրվեց գիտաուսումնական լաբորատորիաների մեկնարկը, ինչը գիտական դրամաշնորհներ, գիտաուսումնական խմբեր և գիտահետազոտական կյանքի աշխուժացմանը միտված այլ ձևաչափեր ներդնելու մեր մոտեցումների հրաշալի շարունակությունն է:

Համալսարանի տարեկան գիտաժողովը ես հատկապես կարևորում եմ ակնկալիքով, որ այն պետք է վեր հանի մեր հավաքական գիտական ներուժը, ցույց տա համալսարանում գիտական կյանքի որակական փոփոխությունը և դառնա հետագա գործունեության յուրօրինակ ուղենիշ: Այս գիտաժողովի հիմքում տնտեսության և հասարակության զարգացման հարցերն են, որոնք ի ցույց են դնում մեր դարաշրջանի մարտահրավերներն ու հնարավորությունները: Իսկապես, սրանք այնքան փոխկապակցված և կարևոր հարցեր են, որոնք չպետք է անտարբեր թողնեն տնտեսագետներին, չէ՞ որ չի կարող լինել հասարակական զարգացման որևէ մակարդակ՝ առանց կենսունակ տնտեսության:

Հուսով եմ, որ գիտաժողովը՝ իր բաժանմունքներով և կլոր սեղաններով, հնարավորություն կտա մասնագետներին ներկայացնելու իրենց մոտեցումները, բացահայտելու գիտաժողովի խորագրում արտացոլված թեման՝ իր բոլոր շերտերով և նրբություններով: Այնպես որ, արգասաբեր և աշխույժ աշխատանք եմ մաղթում Ձեզ:

Շնորհակալ եմ ուշադրության համար:

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր

ԳԱՅԱՆԵ ՍԱԼՆԱԶԱՐՅԱՆ
Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ,
ՀՊՏՀ ԳՄ

ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԳԼՈԲԱԼ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ

Հիմնաբառեր. *պարենային հիմնախնդիր, պարենային ճգնաժամ, պարենային անվտանգություն, ագֆլացիա, գների ինդեքս, ժողովրդագրական պայթյուն*

Հոդվածը նվիրված է համաշխարհային տնտեսությունում պարենային հիմնախնդրի ուսումնասիրությանը: Ներկայացվել են պարենային հիմնախնդրի վերաբերյալ տարբեր մեկնաբանություններ՝ սահմանելով նաև «պարենային անվտանգություն» եզրույթը: Ուսումնասիրվել են պարենային հիմնախնդրի առաջացման հիմքում առկա, մասնավորապես՝ ժողովրդագրական գործոնները, տնային տնտեսությունների ծախսերի կառուցվածքային փոփոխությունները: Առանձնակի ուշադրություն է հատկացվել «ագֆլացիա» երևույթին, որը պարենային ճգնաժամի հիմնական պատճառն է:

Ժամանակակից համաշխարհային տնտեսության առաջ ծառացած գլոբալ հիմնախնդիրներից է պարենային անվտանգությունը: Մարդկության զարգացման ողջ պատմության ընթացքում արդիական է համարվում երկրագնդի բնակչությանը պարենով ապահովելու խնդիրը: Այն բարդ բնույթ է կրում, արտացոլելով տնտեսական աճի և ժողովրդագրության (դեմոգրաֆիայի) տեմպերն ու էությունը, ագրարային տեխնոլոգիայի զարգացումը, բայց, առաջին հերթին, սոցիալական գործոնները տարբեր տարածաշրջաններում, հասարակության տարբեր սոցիալական շերտերի կենսակերպը:

ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (ՊԳԿ) 2017 թ. զեկույցի տվյալներով աշխարհում 815 մլն մարդ սովի է մատնված, որը երկրագնդի բնակչության 11%-ն է, և այս թիվը տարեցտարի աճում է[1]:

Առաջին հայացքից, պարենային խնդիրն այդքան ակնհայտ չէ, որքան աղքատությունը, կլիմայի գլոբալ փոփոխությունները կամ ջրի պակասորդը: Մարդիկ, ապրելով համամատաբար բարձր տնտեսական զարգացվածություն ունեցող երկրներում, դեռևս ուղղակիորեն չեն զգում աշխարհին սպառնացող պարենի անբավարարությունը: Սակայն, առավել աղքատ քաղաքացիների կենսակերպի վրա ավելի շատ է ազդում պարենային ճգնաժամը: Ըստ Տիմերի օրենքի՝ աղքատ տնային տնտեսություններն առավել զգայուն են սննդի գների նկատմամբ, քանի որ նրանք իրենց եկամուտների 60-80%-ը ուղղում են սննդի ձեռքբերմանը, և գների աճի հետ կապված խնդիրը լուծվում է միայն պարենային ապրանքների սպառման կրճատման ճանապարհով: Իհարկե, պարենային ճգնաժամի ծագման պատճառներն ու մեթոդները զարգացած և զարգացող երկրներում սկզբունքո-

[1] http://gordonua.com/news/worldnews/v-oon-zayavili-chto-chislo-golodayushchih-v-mire-uvelichilos-207473.html

րեն տարբեր են, այնուամենայնիվ, դրանք փոխկապակցված են և իրենց ազդեցությունն են թողնում յուրաքանչյուր երկրի սոցիալական, տնտեսական, քաղաքական ոլորտների վրա: Առավել զարգացած երկրներում խնդիրը բարձրորակ, բնական սննդամթերքի պահանջարկի բավարարումն է, իսկ հետամնաց երկրներում՝ «հացի խնդիրը»:

Պարենային հիմնախնդրի սահմանումն իր ուսումնասիրության ամբողջ ընթացքում գիտական գրականության մեջ շատ փոփոխությունների է ենթարկվել: Սկզբում այն նույնացվում էր «սով» հասկացության հետ և բնորոշվում էր որպես բնական, էկոլոգիական աղետներով պայմանավորված՝ սննդամթերքի հանկարծակի պակասորդ: Այս սահմանման համաձայն՝ պարենային խնդիրը կրում է տեղային, կարճաժամկետ բնույթ և դրա «ախտանիշներն» են սպառողական գների, նաև միգրացիայի աճը: 21-րդ դարում գոյություն ունի տեղային պարենային ճգնաժամը համաշխարհայինի վերածվելու լուրջ սպառնալիք: Չնայած վերջին 50 տարվա ընթացքում այդպիսի իրավիճակ եղել է միայն երկու անգամ (1971–1973 թթ. և 2007–2008 թթ.), այնուամենայնիվ պարենային ապրանքների առաջարկի նկատմամբ պահանջարկի աճի հավանականությունը շարունակում է բարձր մնալ: Ժամանակակից մեկնաբանություններում պարենային հիմնախնդիրը պայմանավորված է ոչ այնքան աշխարհում պարենի սղությամբ, որքան սոցիալ-տնտեսական համակարգերի չգործարկմամբ: Ըստ ՊԿԳ-ի փորձագետների՝ պարենային հիմնախնդիրը քաղաքական կամքի բացակայության պատճառ է, իսկ ըստ Ս. Դևերի՝ «Ժամանակակից պարենային հիմնախնդիրը քաղաքական երևույթ է, և այն միշտ հնարավոր է կանխել»[1]: Այժմ գլոբալ հիմնախնդրի գլխավոր պատճառը պարենային գների աճն է, ըստ այդմ էլ՝ աշխարհի շատ երկրներում մարդկանց մեծամասնությունը սովի է մատնված: ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի տասնմեկերորդ տնօրեն Ժ. Շիրանի մեկնաբանությամբ՝ «Չնայած պարենային ապրանքների արտադրության զգալի աճին՝ մենք ստիպված ենք փաստել, որ աշխարհում այժմ ավելի շատ սոված մարդիկ կան, քան երբևէ: Սուպերմարկետներում դրված է սննդամթերք, սակայն, մարդիկ չեն կարող գնել դա»[2]:

Պարենային հիմնախնդիրը համաշխարհային տնտեսություններում նոր երևույթ չէ, սակայն 21-րդ դարում հասարակական ընկալումը սրվեց երկու խնդրի վերաբերյալ՝ աղքատության և սովի, առաջացան հիմքեր պարենային հիմնախնդիրն անվանելու պարենային ճգնաժամ: Պրոֆեսոր Ե. Սերովայի դիտարկմամբ՝ 20-րդ հարյուրամյակում համաշխարհային պատերազմների միջև ընկած ժամանակահատվածներին հատուկ են եղել պարենային գների իջեցումը և նավթային ճգնաժամի հաղթահարումը: Հայտնի մասնագետը նշում է. «Պարենային ճգնաժամը, որը բնութագրվում է պարենի համաշխարհային գների կտրուկ աճով, սկսեց երևան գալ 2003 թ., սրվեց 2006 թ. և իր գագաթնակետին հասավ 2008 թ.: Դրանք որոշակի ժամանակահատվածում կտատանվեն վերև և ներքև, բայց էժան պարենի դարաշրջանն արդեն ավարտված է»[3]: Սրանից հետևում է, որ արդի խնդիր է ոչ թե այն՝ արդյո՞ք կկարողանա Երկիր մոլորակն իր աճող բնակչության համար

[1] Devereux S., ed. The new famines. Why famines persist in an era of globalization. London: Routledge, 2007.

[2] Introduccion A La Crisis Alimentaria Global// GRAIN, Entrepueblos y la Campaña «No te Comas el Mundo», 2008, p. 7.

[3] http://www.ecpol.ru/2012-04-05-13-45-47/2012-04-05-13-46-45/185-perspektivy-globalnykhprodovolstvennykh-rynkov.html

արտադրել անհրաժեշտ քանակի պարեն, այլ թե առաջիկա տասնամյակում կհաջողվի արդյո՞ք մարդկությանը ձեռք բերել կենսական պայմանների համար անհրաժեշտ սննդամթերք՝ առավել խելամիտ գներով՝ հասարակության աղքատ շերտերի եկամուտների համապատասխան:

Պարենային հիմնախնդիրն ուսումնասիրելիս անհրաժեշտություն է առաջանում սահմանելու «պարենային անվտանգություն» հասկացությունը՝ որպես գլոբալ ֆենոմեն: ՊԳԿ մեկնաբանությամբ՝ պարենային անվտանգությունն այն իրավիճակն է, երբ երկրում բոլոր մարդիկ հնարավորություն ունեն ձեռք բերելու իրենց պահանջմունքների բավարարման և առողջ ապրելակերպ վարելու համար անհրաժեշտ քանակի սննդամթերք: Վերլուծաբանները սահմանում են նաև «ազգային պարենային անվտանգություն» հասկացությունը, որը ներկայացնում է բնակչությանն անընդմեջ պարենով ապահովումը սեփական ռեսուրսների հաշվին, այսինքն՝ երկիրը չպետք է սննդի կախվածություն ունենա արտաքին մատակարարներից:

Տնտեսական զարգացման բարձր տեմպեր ունեցող երկրներում պարենային տնտեսական անվտանգությունը բաժանում են երկու մակարդակի՝ պետության անվտանգություն և բնակչության անվտանգություն. առաջին դեպքում պարենային անվտանգության ավանդական մեկնաբանությունն է, այսինքն՝ պարենով ապահովվածությունը, իսկ երկրորդ դեպքում չափանիշն ապրանքների որակն է, որը պետք համապատասխանի բնակչության պահանջներին:

Պարենային հիմնախնդրի առաջացման հիմքում բազմաթիվ գործոններ են: Առանձնացնենք դրանցից առավել էականները.

Ժողովրդագրական: Երկրագունդն ունի սահմանափակ հնարավորություններ՝ կերակրելու աճի բարձր տեմպեր ունեցող բնակչությանը: Այս խնդրին առաջին անգամ անդրադարձել է Թոմաս Մալթուսը. 1798 թ. իր աշխատության մեջ նա նշել է, որ բնակչության թվի աճը մի քանի անգամ գերազանցում է երկրի՝ բնակչությանը սննդամթերք արտադրելու հնարավորություն. բնակչությունն աճում է երկրաչափական, իսկ սննդի արտադրությունը՝ թվաբանական պրոգրեսիայով: 1963 թ. արգենտինացի պրոֆեսոր Վենտուրա Մորերոն իր «Ագրոկուլտուրա և արդյունաբերություն» աշխատության մեջ հատուկ ուշադրություն է հատկացրել 20-րդ դարում սկսված ժողովրդագրական պայթյունին՝ նշելով «Որպեսզի երկրագնդի բնակչությունը հասներ 1,5 միլիարդի, պահանջվեց Ք.Ա. երկու հազար տարի և Քրիստոսի ժամանակաշրջանում՝ 19 դար, բայց ընդամենը 60 տարում բնակչության թիվը կրկնապատկվեց»:

2011 թ. հոկտեմբերին երկրագնդի բնակչության քանակն անցավ 7 մլրդ-ի սահմանագիծը, և ՄԱԿ-ի կանխատեսումներով 2025 թ. դա կհատի 8 մլրդ-ի, իսկ 2050 թ.՝ արդեն 9 մլրդ-ի սահմանը: Բավական է նայել համացանցում տեղադրված «աշխարհի բնակչության հաշվիչին», որ անմիջապես հասկանալի դառնա, թե ինչ արագությամբ է ավելանում երկրի բնակչությունը: Ըստ այդ «հաշվիչի» տվյալների՝ 2016 թ. տարեկան աճը կազմել է 88 մլն մարդ, իսկ 2017 թ. բնակչության օրական աճի տեմպը 247 756 մարդ[1] է:

[1] http://countrymeters.info/ru/World

Նման սրընթաց աճին զուգընթաց գնալով սրվում է պարենային ապահովման հիմնախնդիրը:

Տնային տնտեսությունների սպառողական ծախսերի կառուցվածքային փոփոխությունը պայմանավորված է սպիտակուցային սննդի նկատմամբ պահանջարկի ավելացմամբ: Վերջին կես դարում բուսական ծագում ունեցող ապրանքների կողքին մեծ պահանջարկ է վայելում նաև սպիտակուցային սնունդը, որը կենդանական ծագման է: Համաձայն ՊԳԿ վիճակագրության՝ ներկայումս 1960 թ. համեմատությամբ զարգացող երկրներում կաթի նկատմամբ պահանջարկը կրկնապատկվել է, մսի նկատմամբ՝ եռապատկվել, իսկ ձվի նկատմամբ՝ հնգապատկվել: Մսի, ձվի և կաթնամթերքի նկատմամբ պահանջարկի աճը բարձր ուրբանիզացիայի հետևանք է: Բանն այն է, որ քաղաքում բնակվող մարդիկ ավելի հակված են դրսում սնվելու՝ օգտվելով արագ սննդի կետերից, կիսաֆաբրիկատներից, ինչի հետևանքով էլ անհրաժեշտություն է առաջանում կենդանական ծագման ապրանքատեսակների արտադրության, որը ավելի ծախսատար է, քան բուսականը: Անհրաժեշտ է նաև նշել, որ սպառման մակարդակի աճ նկատվում է ոչ միայն բացարձակ ծավալով, այլև մեկ բնակչի հաշվով, (օրինակ՝ եթե Խորհրդային Միության տարիներին Ռուսաստանում մսի տարեկան սպառումը մեկ շնչի հաշվով 65 կգ էր, ապա այժմ՝ 75 կգ[1]):

Աղյուսակ 1

Պարենային գների ինդեքսը 2000-2016 թթ.[2]

Տարիներ	Պարենի գների ինդեքս	Մսամթերք	Կաթնամթերք	Հացահատիկ	Բուսական յուղ	Շաքար
2000	91.6	96.5	95.3	85.8	69.5	116.1
2001	94.6	100.1	105.5	86.8	67.2	122.6
2002	89.6	89.9	80.9	93.7	87.4	97.8
2003	97.7	95.9	95.6	99.2	100.6	108.6
2004	112.7	114.2	123.5	107.1	111.9	101.7
2005	118.0	123.7	135.2	101.3	102.7	140.3
2006	127.2	120.9	129.7	118.9	112.7	209.6
2007	161.4	130.8	219.1	163.4	172.0	143.0
2008	201.4	160.7	223.1	232.1	227.1	181.6
2009	160.3	141.3	148.6	170.2	152.8	257.3
2010	188.0	158.3	206.6	179.2	197.4	302.0
2011	229.9	183.3	229.6	240.3	254.5	368.9
2012	213.1	182.0	193.6	236.1	223.9	305.7
2013	209.8	184.1	242.7	219.3	193.0	251.0
2014	201.8	198.3	224.1	191.9	181.1	241.2
2016	161.5	156.2	153.8	146.9	163.8	256.0
2017 (հոկտեմբեր)	176	174	214	152	170	202

[1] https://www.irk.ru/obed/articles/20120528/meat/

[2] http://www.fao.org/worldfoodsituation/foodpricesindex/ru/

2011 թ. ՊԳԿ-ն առաջին անգամ ամբողջական տվյալներ հրապարակեց հողային և ջրային ռեսուրսների վերաբերյալ՝ ըստ որոնց հողերի 25%-ն ամբողջովին դեգրադացված է, 8%-ը՝ մասամբ: ՊԳԿ կանխատեսումներով առաջիկա 40 տարվա ընթացքում ամբողջովին կսպառվի վարելահողերի ընդարձակման հնարավորությունը, իսկ ոռոգման ջրի վերականգնվող պաշարների 70%-ը ներկայումս օգտագործվում է[1]:

Պարենային հիմնախնդրի հիմքում է ***«ագֆլացիան»***, որը համեմատաբար նոր եզրույթ է տնտեսագիտական գրականության մեջ: Այն արտացոլում է համաշխարհային շուկայում պարենային ապրանքների գների կտրուկ աճը:

Աղյուսակում ներկայացված 1 ՊԳԿ-ի կողմից հրապարակված՝ վերջին 16 տարվա պարենային գների ինդեքսը, որն էլ փաստում է ագֆլացիայի առկայությունը համաշխարհային տնտեսությունում: ՄԱԿ-ը կանխատեսում է, որ առաջիկա 20 տարիներին հիմնական պարենային ապրանքատեսակների գները կկրկնապատկվեն, ինչն էլ ճգնաժամի առաջացման լուրջ սպառնալիք է:

Այսպիսով՝ ժամանակակից համաշխարհային տնտեսությունում պարենային հիմնախնդիր ծնող գործոններ են բնական ռեսուրսների ոչ արդյունավետ օգտագործումը, սպառման մակարդակի անընդհատ աճի տեմպերը, գների մակարդակի աճը և այլն: Ուստի գլոբալ պարենային խնդիրն իր էությամբ ու բովանդակությամբ տնտեսական երևույթ է, որին կարող են հետևել նաև քաղաքական լուրջ հարցեր:

ГАЯНЕ САЛНАЗАРЯН

ПРОДОВОЛЬСТВЕННАЯ БЕЗОПАСНОСТЬ КАК ГЛОБАЛЬНАЯ ПРОБЛЕМА

Ключевые слова: *продовольственная проблема, продовольственный кризис, продовольственная безопасность, агфлация, индекс цен, демографический взрыв*

Статья посвящена изучению продовольственной проблемы в современной мировой экономике. Представленны разные трактовки продовольственной проблемы, определена концепция продовольственной безопасности. Изучены факоры, лежащие в основе глобальной продовольственной проблемы, в частности демографические факоры, изменение структуры расходов домохозяйств. Особое внимание было уделено явлению "агфлация", которое и является основной причиной продовосьтвенного кризиса.

GAYANE SALNAZARYAN

FOOD SECURITY AS A GLOBAL PROBLEM

Key words: *food problem, food crisis, food security, agflation, price indexes, population explosion*

---

[1] Ս. Ավետիսյան, Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության հրատապ խնդիրները, Եր.: «Տնտեսագետ», 2014, 96 էջ, («Ամբերդ» մատենաշար), էջ 12: